ԱՆԻՎ

Երեւանի պետական համալսարանը բազում ծրագրեր է իրականացնում՝ Ցեղասպանության հարյուրամյակին ընդառաջ: Առջեւում են միջազգային ու հանրապետական բնույթի կարեվոր գիտաժողովներ:

-Ապրիլի 21-ին տեղի կունենա ամենակարևոր միջոցառումներից մեկը՝ համալսարանին կից Երախտիքի ծառուղու բացումը:

«Անիվ»-ի բացառիկ հարցազրույցը՝ պատմաբան, Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանի հետ: Նաեւ այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական նորամուտ ծրագիրը: Տե՛ս՝ էջ 10

Ցեղասպանության անմեղ զոհերին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի կառուցումից անցել է 48 տարի: Սկզբում ուներ այս տեսքը, այժմ դարձել է միլիոնուկես նահատակների

հիշատակի հավերժական հանգրվանը: Մանրամասներ, որ հետաքրքիր են եւ ուսանելի: էջ 3

Մերի Աբրահամյանը պեղել է ֆիլմաշխարհը եւ ներկայացրել Հայոց ցեղասպանության տարելիցին նվիրված կինոնկարների մասին վերլուծական տեսակետ: Նրա խոշորացույցի տակ է «1915» հուզիչ ֆիլմը: Հայ կինոմանն այն դեռ չի հասցրել դիտել. պրեմիերան ապրիլի 25-ից է: Մանրամասները՝ էջ 7-ում:

Սիրելի հայ քրիստոնյաներ, այսօր ոգեկոչում ենք այդ ողբերգական իրադարձության, այդ անսահման եւ անիմաստ կոտորածի հարյուրամյակը, որի դաժանությունը ձեր նախնիները ստիպված եղան վերապրել: Թաքցնել կամ ժխտել չարի-քը՝ նշանակում է արնաքամ անել վերքը՝ առանց վիրակապելու:

Հռոմի Ֆրանցիսկոս պապ

էջ 12

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

24 ապրիլ

Created using
easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

2015-1915=100

ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՎ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Created using
easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

ԱՆԻՎ

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

Գլխավոր խմբագիր
Սամվել Մելքոնյան

Խմբագիր
Անուշ Խուդոյան

Հեղինակներ

Սամվել Մելքոնյան
Մարիամ Սարգսյան
Անուշ Խուդոյան
Մերի Աբրահամյան
Սոնա Վարդանյան
Լառա Հակոբյան
Շուշան Ասատրյան

Տառատեսակներ

Sylfaen
Arial Armenian

www.facebook.com/pages/Անիվ-ամսագիր/664888136966506

Այցելեք նաեւ՝
www.anivamsagir.mozello.ru

ԱՆԻՎ

«Անիվ»-ի ցանկացած նյութ կարելի է որեւէ լեզվով ամբողջությամբ կամ հատվածաբար օգտագործել միայն «Անիվ» նախագծի գրավոր թույլտվությամբ:
«Անիվ» ամսագրին հղումը պարտադիր է:
Ամսագրի հեղինակների պատրաստած նյութերը «Անիվ» ամսագրի սեփականությունն են:

Հրատարակիչ՝ «Անիվ» նախագիծ
Հիմնադիր՝ Սամվել Մելքոնյան

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, Երեւան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ, Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մասնաշենք
www.amsagir14@mail.ru

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

Երևան, 1966 թ.

Created using
easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

ԱՎԱՐՏԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ



ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՎԱԾ ԲԱՑԱՌԻԿ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՇԱՐՔԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է «ԱՆԻՎ» ԲԼՈԳՈՒՄ
WWW.ANIVAMSAGIR.MOZELLO.RU

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Կարգավիճակ՝
ՀՀ պետական հուշարձան
Համայնքը՝
Կենտրոն
Քանդակագործ՝
Վան Խաչատուր
Ճարտարապետներ՝
Արթուր Թարխանյան
Սաշուր Քալաշյան
Շինարարության սկիզբ՝
1966 թվական
Շինարարության ավարտ՝
1967 թվական
Օգտագործված նյութ՝
Փամբակի գրանիտ,
բազալտ
Բարձրությունը՝
44 մետր
Ներկա վիճակը՝
կանգուն

Created using
easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

Խմբագրի խոսք

Այս պահի քաղաքականությունը եթե մեկ բառով ձեւակերպելու լինենք հայտնի «Մաֆիա» խաղի կանոններով, աներկբա կարող ենք ասել՝ 2015-ը բարի էր բոլորի համար՝ բացի Էրդողանից: Ինչ տարին սկսվել է, այս մարդը ջղաձգումների մեջ է: Թուրքիան մի լավ ճնշվում է արտաքին աշխարհի կողմից, որ ստիպում է առճակատվել սեփական պատմությանը: Եթե մինչ այս բոլոր հնչածները սոսկ կոչեր էին, ապա ապրիլի տասներկուսին Վատիկանը մատուցեց մի պատարագ, որ քրիստոնեության համատեքստում խաչաձեւեց անցյալի պատմությունը, ներկայի թուրքական մանեւրները եւ ապագայի քաղաքականությունը: Հռոմի Ֆրանցիսկոս պապը ցուցամատը մեկնեց՝ ոչ թե ասելու՝ «Թագավորը մերկ է», այլ ի լուր աշխարհի ամրագրելու՝ թուրքական պատմությունը տեղը տեղին վարագուրված է: Անմիջապես «փայլփլեցին» Անկարայի դիվանագիտության գոհարները, որ երեւի երբեւէ այսքան խամրած չէին եղել: Մի բան ակնառու է՝ ցանկացած ու ցանկացածի դիվանագիտություն թավալ է գալիս արդարության ոտքերի տակ: Հանրագումարում ամբիոնը ԱՄՆ նախագահինն է: «Ի վերջո,-տրամաբանում ենք մենք,- նրա համար պետք է որ զոնե փոքր-ինչ բեկումնային լինի Ֆրանցիսկոս պապի ելույթը»: Պետք է որ բեկումնային լինի, եթե, իհարկե, Օբաման տեսել է այդ ելույթը: Իսկ եթե չի տեսե՞լ ու բացարձակ տեղյակ չէ անցած մի քանի օրվա լրահոսի՞ց: Ծիծաղելի չէ: Օրինակ՝ Վլադիմիր Պուտինը վերջերս լրագրողների հարցերին ի պատասխան՝ ասաց, թե ինքը տեղյակ չէ անցած օրերի լրատվությունից, որովհետեւ ուղղակի չի հետեւել: Եթե Ռուսաստանի առաջնորդը «գաղափար չունի» Հռոմի պապի ելույթից, մի՞թե արդարացի կլինենք Բարաք Օբամային մեղադրելով, երբ նա էլ ասի՝ կներեք, բայց լուրերից հեչ տեղյակ չեմ:

Ի՞նչ կա որ. հո արդեն աննախադեպ բա՞ն չէ:

Սամվել Մելքոնյան

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

ՖԻԼՄԱՇԽԱՐՀ

Այս օրերին աշխարհի տարբեր անկյուններում տեղի են ունենում 20-րդ դարասկզբի արյունալի ու ողբերգական իրադարձության մասին պատմող ֆիլմերի ցուցադրություններ: Քիչ չեն պրեմիերաները, որոնք տարբերվում են իրենց բազմազանությամբ՝ փաստավավերագրական, անիմացիոն, կարճամետրաժ, գեղարվեստական և այլն: Ոչ ոք չի կարող հերքել՝ գեղարվեստական կինոնկարներն ամենամեծ լսարանի տերն են և կարող են որոշակի ազդեցություն ունենալ հասարակության շերտերի վրա: Ուստի Հայոց ցեղասպանության մասին իրազեկումը գեղարվեստական մոտիվներով՝թերևս լավագույն միջոցներից է: Ի դեպ, Թուրքիան, հենց այս հնարքը կիրառելով և մի քանի հոլիվուդյան աստղերի վճարելով, գեղարվեստական ֆիլմեր է նկարում՝ խեղաթյուրված պատմական հիմքով: Նման պայմաններում հայկական արտադրության որակյալ ֆիլմերի առկայությունը պարտադիր է:

2015-ի գարնանային պրեմիերաներից ամենասպասվածը **«1915»** հոգեբանական թրիլլերն է, որը կցուցադրվի աշխարհի տարբեր կինոթատրոններում, իսկ ապրիլի 25-ից՝ Հայաստանում: Գործողությունների կենտրոնում առեղծվածային թատրոնի բեմադրիչ Սիմոնն է, որ 2015 թվականին՝ սարսափելի ոճրագործությունից ուղիղ 100 տարի անց, որոշում է Լոս Անջելեսի թատրոններից մեկում բեմադրել ներկայցում՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին: Ցուցարարները շրջապատում են նրա թատրոնը, իսկ փորձերի ժամանակ տարօրինակ ու անհասկանալի դեպքերը հաջորդում են մեկը մյուսին՝ խուճապի մատնելով պրոդյուսերներին ու դերասաններին: Ներկայացման փորձերի ընթացքը վերածվում է հոգեբանական ծանրը քաոսի, որտեղ պարզվում է՝ ռեժիսորի առաքելությունն իսկապես վտանգավոր է, իսկ անցյալի ուրվականներն արդեն ամենուր են: «Մեռածների ճակատագիրը ձեր ձեռքերում է, նրանց սարսափը՝ ձեր սրտերում: Այսօր երեկոյան՝ ժամը 5-ին, դուք այլևս դերասաններ չեք լինի, դուք կյանքի կկոչեք այդ մոռացված հոգիներին կամ կմեռնեք նրանց հետ »,-ներկայացումից ժամեր առաջ դերասաններին է ասում բեմադրիչը:

«1915»-ի ռեժիսորներն ու սցենարի հեղինակներն են Կարին Հովհաննիսյանը և Ալեք Մուհիբյանը: Հովհաննիսյանը, ռեժիսուրայով զբաղվելուց բացի, նաև ստեղծագործում է: Նրա ընտանիքի 3 սերնդի մասին կարճ պատմությունները նախ լույս են տեսել «Լոս Անջելես թայմս» և «Նյու Յորք թայմս» պարբերականներում, ապա «Ստվերների ընտանիքը» առանձին գրքով: Նշենք նաև,որ Կարին Հովհաննիսյանը Հա-

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

յաստանի առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի որդին է: Վերջինս, ի դեպ, ևս մասնակցել է կինոնկարի ստեղծման աշխատանքներին: Իսկ Ալեք Մուհիբյանն ամերիկահայ պրոդյուսեր-ռեժիսոր է, որը խաղացել է «Բուժիր Ամերիկան» փաստավավերագրական ֆիլմում: Ալեքն ու Կարինը միասին էին աշխատում դեռ միջին դպրոցից և միայն 15 տարի անց բացում են իրենց «Բլուդվայն» (Bloodvine) կինոստուդիան և սկսում համատեղ առաջին ֆիլմի `«1915»-ի նկարահանումները:

«Սա ժխտման մասին է. ինչպես ենք մենք փորձում փախչել պատմությունից, և ինչպես է պատմությունը շարունակում հետապնդել մեզ: Այն նաև մեր անձնական անցյալի ուրվականներին առերեսվելու անհրաժեշտության մասին է…Այն մասին, թե ինչ է կատարվում, երբ անցյալն անտեսվում է»,- հարցազրույցներից մեկում ասել է Կարին Հովհաննիսյանը:

Ինչ վերաբերում է ֆիլմի դերասանական կազմին, ապա այստեղ մեծամասնություն են կազմում օտարազգիները՝ բացառությամբ գլխավոր դերերի, որոնք բաժին են հասել ծագումով հայ դերասանների: Գլխավոր հերոս թատրոնի բեմադրիչ Սիմոնին մարմնավորում է ֆրանսահայ դերասան Սիմոն Աբգարյանը: Նա ճանաչված է «Արարատ», «Կազինո Ռոյալ» և վերջերս նկարահանված «Սպին» կինոնկարներից: Իսկ թատրոնի դերասաններից մեկին կերտած Անժելա Սարաֆյանը ամերիկահայ դերասանուհի է, խաղացել է բազմաթիվ ֆիլմերում ու սերիալներում: Հատկապես հայտնի է «Մթնշաղ սագա. լուսաբաց», «Պարանոյա», «Ներգաղթյալ» ֆիլմերից: Իր կերպարի մասին դերասանուհին ասել է. -Ես մեծացել եմ՝ ճանաչելով հայ կանանց, նրանց սերը, մեծահոգությունն ու նվիրվածությունն ընտանիքին: Նրանք պատրաստ են զոհաբերելու իրենց՝ հանուն հարազատների. ահա թե ով է հայ կինը … Այս դերը խաղալն ինձ համար շատ կարևոր էր:

Թվում է՝ այսքանը պիտի բավարար լիներ կինոնկարին անհամբերությամբ սպասելու համար, բայց հաջորդ տվյալն է՛լ ավելի կոգևորի ու առավելապես կուրախացնի երաժշտասերներին: «1915»-ի կոմպոզիտորն աշխարահռչակ «System of a Down» մետալ-ռոք խմբի մեներգիչ, «Գրեմմի» ստացած հայ երաժիշտ, երգահան Սերժ Թանգյանն է: Նա ամիսներ է աշխատել երաժշտության վրա՝ օգտագործելով մի ամբողջ նվագախումբ, դաշնամուրային գործիքներ՝ սահմոկեցուցիչ, առեղծվածային ու գեղեցիկ երաժշտական կտորներ ստեղծելու համար: Դրանք կարտացոլեն ֆիլմի ոգին: Թանգյանի կարծիքով՝ կինոնկարը ժամանակակից մոտեցում է հին ցավին՝ կորստի ցավին: Ամեն ինչ արված է գրագետ ու գեղարվեստականորեն. «Շատ լավ ֆիլմ է, հուսով եմ ՝ մրցանակներ կշահի, քանի որ ունի հիանալի դերասանական կազմ, հիանալի խաղ, հիանալի սցենար և, ի վերջո, հիանալի երաժշտություն»: Թանգյանի «System of a Down» խումբն ապրիլի 2-ին մեկնարկել է իր Wake up the souls («Արթնացրու ոգիները») համերգային շրջագայությունը՝ նվիրված Ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչմանը: Հավելենք, որ Ֆիլմի առաջին ցուցադրությունը տեղի է ունեցել ապրլի 6-ին Բեռլինի Մաքսիմ Գորկու անվան թատրոնում: Պրեմիերային ներկա էին ռեժիսորներ Կարին Հավհաննիսյանը, Ալեք Մուհիբյանը, Նիկոլայ Կինսկին, ինչպես նաև կանդահայ հայտնի ռեժիսոր Ատոմ Էգոյանը: Ֆիլմի ցուցադրությանը հաջորդել է քննարկում, հանդիսատեսը գոհ է հեռացել: Իսկ մեզ մնում է սպասել մինչև ապրիլի 25-ը ՝ ֆիլմը գնահատելու համար :

Մերի Աբրահամյան

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

Անուշ Խուդոյան

«ԱՋԵՐԻ» ՊԱՅՔԱՐՆ ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՎԱԾԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ

«Անիվ»-ականները վերջերս բանավիճում էին հայ ազգի անցած ճանապարհի, հաղթանակների ու վերածննդի հարցերի շուրջ՝ դրբանք մեծապես պայմանավորելով անհատների ներգործությամբ: Մեր ժողովուրդն աստվածատուր է, բայց կարծում ենք՝ ոչ դիվանագետ, ոչ էլ միասնական (Սամվելը կասեր՝ մի միավորվում ենք հարյուր տարին մեկ անգամ՝ տասը բոպեով)եւ սովոր ենք «մետ»

լինելու՝ բուզանդամետ, պարսկամետ, ռուսամետ, ամերիկամետ, բայց ազգամետ լինելը մեր գաղափարախոսության մեջ չէ… Այսպիսով, քանի որ «Անիվ»-ականներն ամենուր են (մասնավորապես, յուրաքանչյուր ամսվա երրորդ ուրբաթն անցկացնում են ազգային երգ ու պարով), այս անգամ էլ համոզվեցինք, որ մեզանում գործում են հզոր անհատները, որոնք կրում են խաչը՝ պահելու հայի տեսակը: Նախորդ ամսվա հանդիպմանը, որն ավանդաբար անցկացվում է «Նարեկացի» արվեստի կենտրոնում, արցախյան հերոսամարտի մասնակից, ազգային պարարվեստի երախտավոր գործիչ Գագիկ Գինոսյանը կարեւոր կոչով հանդես եկավ՝ ինչ-որ չափով փոխելու ապրիլ 24-ի ընթացքը. շուռ տալ պարտվածի ու ցեղասպանվածի էջը: Ծիծեռնակաբերդ տանող ճանապարհի ձախ պատին, իսկ ձախը ենթագիտակցորեն նույնացվում է անհաջողության, ձախորդության հետ, գրված են այն բոլոր բնակավայրերի անունները, որտեղ ջարդեր են եղել: Խնդիրն այն է, որ տեղանունները գրված են թուրքական տարբերակներով՝ Ադանա, Հաճըն եւ այլն:

Գինոսյանը նշում է. «Մեզնից յուրաքանչյուրը պիտի իր, կողքինի մեջ կերտի հաղթողի ոգին»: Ուստի «Անիվ»-ականները նույնպես կոչ են անում՝ միանալու այս ընդունելի գաղափարին. Ծիծեռնակաբերդ տանող ճանապարհի աջ կողմում, իսկ աջը ենթադրում է հաջողություն, պիտի հայեցի գրվեն բոլոր այն բնակավայրերի անվանումները, որտեղ հերոսամարտեր են եղել: Ի վերջո, աջակողմյան հաղթողի հոգեբանությունն է տապալելու ձախակողմյան ցեղասպանվածի մշակույթը…

Հ.Գ. Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ շուտով Գագիկ Գինոսյանը կհանդիպի ապագա լրագրողներիս հետ: Այլ մանրամասներ՝ «Անիվ» բ

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image



Սոնա
Վարդանյան

ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ԵՂԵՌՆԻ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

*Մայր բուհն անմասն չի մնում Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին նվիրված միջոցառումների անցկացումից: Դրանց արդյունավետության, կարևորության և այլ հարցերի շուրջ զրուցեցինք ԵՊՀ միջոցառումների նախապատրաստական աշխատանքները համակարգող հանձնաժողովի նախագահի տեղակալ, ԵՊՀ ՀՀԻ փոխտնօրեն **Միհեր Հովհաննիսյանի** հետ:*

-ԵՊՀ-ն ինչպե՞ս է պատրաստվում հարյուրամյա տարելիցի միջոցառումներին, ի՞նչ եք արդեն հասցրել անել: Առջևում շա՞տ ծրագրեր կան:

-Ասեմ, որ միջոցառումները համակարգող հանձնաժողովը հստակ մշակված մեխանիզմ ունի, որի համաձայն էլ իրականացվում են ամենատարբեր միջոցառումներ՝գիտաժողովներ, ցուցադրություններ, գրքերի հրատարակություններ (ժողովածուների կամ մենագրությունների տեսքով): Արդեն իրականացրել ենք երկու գիտաժողով, որից մեկը միջազգային բնույթ ուներ: Նախատեսվում է ևս յոթը, այդ թվում՝ միջազգային ու ներհամալսարանական կամ հանրապետական բնույթի: Ապրիլի 21-ին տեղի կունենա ամենակարևոր միջոցառումներից մեկը՝ համալսարանին կից Երախտիքի ծառուղու բացումը:

-Այս ամենի շրջանակում ինչպիսի՞ն է լինելու ԵՊՀ-Սփյուռք գործակցությունը:

-Այժմ փորձում ենք առավել ակտիվ աշխատել Սփյուռքի հետ: Վերջերս Մոսկվայում համշենահայ որոշ կառույցների հետ համատեղ ներկայացրինք ԵՊՀ ՀՀԻ Հայ-օսմանական առնչությունների բաժնի ղեկավար Լուսինե Սահակյանի «Համշենը անցյալի և ներկայի խաչմերուկում» պատմավավերագրական ֆիլմը, հանդես եկանք

դասախոսություններով:

Կան այլ ծրագրեր ևս, որոնք հիմնականում բանակցային փուլում են և ընթացիկ լուծումներ են ստանում:

-Պարոն Հովհաննիսյան, ՀՀԻ-ն վերջերս ներկայացրեց «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրը: Կարո՞ղ ենք ասել, որ այն ուսանողներին կմասնագիտացնի Հայոց ցեղասպանության հարցում ոչ միայն միջազգային իրավունքի տեսակետից, այլ նաև պատմական, հոգեբանական, փիլիսոփայական:

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

-Եթե համոզված չլինեինք, որ ծրագիրը արդյունավետ կլինի այդ տեսանկյունից նույնպես, հավանաբար կյանքի չէինք կոչի: Ըստ էության՝ մենք առաջին անգամ ենք ապագա ցեղասպանագետներ պատրաստելու փորձ կատարում: Ծրագիրը համեմված է մի շարք մասնագիտական ուղղություններով, այսինքն՝ նախատեսված է տարբեր ֆակուլտետների ուսանողների հա-մար: Որպես դասավանդող մասնագետներ՝ ընդգրկվել են ոչ միայն ԵՊՀ-ից, այլև Ցե-ղասպանության թանգարան-ինստիտուտից, ԳԱԱ Պատմության և Արևելագիտության ինստիտուտներից: Սա որակական նոր թափ կհաղորդի:

-Իրականացվող միջոցառումները որքանո՞վ են պահպանում իրենց նպատակայնությունը:

-Իհարկե, դրանք ինքնանպատակ չեն: Օրինակ՝ գիտաժողովներից հետո լավագույն զեկույցները լույս են տեսնում ժողովածուների տեսքով: Եթե ընդհանրացնելու լինենք, ապա կարելի է ասել, որ մեր նախաձեռնությունները գլոբալ գործընթացի մի մասն են և նպատակ են ունենալու անհրաժեշտության դեպքում աջակից հավելում տալ այն խնդրին, որն անվանում ենք Հայոց ցեղասպանության ընդունման և պահանջատիրության հարց:

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ

ՀՌՈՄԻ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵԼՈՒՅԹԸ



Սիրելի հայ եղբայրներ եւ քույրեր,

Սիրելի եղբայրներ եւ քույրեր,

Մի քանի առիթներով ես խոսել եմ մեր ժամանակների մասին՝ իբրեւ պատերազմի ժամանակների, երրորդ համաշխարհային պատերազմը ընթանում է աստիճանաբար. մի պատերազմ, որի ընթացքում մենք ականատեսն ենք լինում դաժան հանցագործությունների, գազանաբարո ոճրագործությունների եւ իմաստազուրկ ավերածությունների: Ցավոք, այսօր եւս մենք լսում ենք խլացված եւ մոռացված ճիչը անպաշտպան մեր բազում եղբայրների եւ քույրերի, ովքեր իրենց քրիստոնեական հավատքի կամ էթնիկ պատկանելության պատճառով սառնասրտորեն սպանվեցին՝

գլխատվեցին, խաչվեցին, ողջակիզվեցին, կամ էլ ստիպված եղան լքելու իրենց հայրենիքը: Այսօր եւս մենք ինչ-որ իմաստով ցեղասպանության միջով ենք անցնում, որի պատճառը ընդհանուր եւ հավաքական անտարբերությունն է, Կայենի հանցակից լռության պես, ով գոչում էր. «Ինչպե՞ս է

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ

ինձ վերաբերում: Արդյո՞ք ես եմ իմ եղբոր պահապանը»:

Անցյալ դարում մարդկային մեր ընտանիքը վերապրել է երեք մասսայական եւ աննախադեպ ողբերգություն: Առաջինը դրանցից լայնորեն ճանաչված է որպես «XX դարի առաջին ցեղասպանություն» (Հովհաննես Պողոս պապ եւ Գարեգին Երկրորդ, Համատեղ հռչակագիր, Էջմիածին, 27 սեպտեմբերի, 2001թ), պատահել է հայ ազգի՝ առաջին քրիստոնյա ժողովրդի, ինչպես նաեւ կաթոլիկ եւ ուղղափառ սիրիացիների, ասորիների, խալդիեացիներին եւ հույների հետ: Սպանվել են եպիսկոպոսներ եւ քահանաներ, հավատացյալ կանայք եւ տղամարդիկ, ծերեր եւ նույնիսկ անպաշտպան երեխաներ ու տկարներ: Մյուս երկու [ողբերգությունները] իրականացվել են նացիզմի եւ ստալինիզմի ձեռամբ: Ավելի նոր ժամանակներում այլ մասսայական սպանություններ նույնպես տեղի ունեցան, ինչպես օրինակ՝ Կամբոջայում, Ռուանդայում, Բուրունդիում եւ Բոսնիայում: Թվում է, թե մարդկությունը անկարող է վերջ դնել անմեղ արյան թափվելուն: Թվում է, թե այն ոգեւորությունը, որ առաջացել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, այժմ արդեն հօդս է ցնդում: Թվում է, թե մարդկությունն արդեն հրաժարվում է տեռորի օրենքով պատճառված սեփական սխալների վրա սովորելուց, քանի որ այսօր նույնպես կան այնպիսիները, որոնք փորձում են վերացնել այլոց՝ քչերի ձեռքերով, եւ պարզապես մի կողմ են քաշված մյուսների հանցակից լռությամբ: Մենք դեռեւս չենք հասկացել, որ «պատերազմը խելագարություն է», «մի անզգա արյունահեղություն»:

Սիրելի հայ քրիստոնյաներ, ցավով լցված մեր սրտերը միաժամանակ հուսառատ են Աստծո հարությամբ, եւ մենք այսօր ոգեկոչում ենք այդ ողբերգական իրադարձության, այդ անսահման եւ անիմաստ կոտորածի հարյուրամյակը, որի դաժանությունը ձեր նախնիներն ստիպված եղան վերապրել: Կարեւոր է, եւ հիրավի մեր պարտքն է հարգել նրանց հիշատակը, քանի որ երբ հիշողությունն է մարում, չարիքն այդ վերքերը նորոգում է: Թաքցնել կամ ժխտել չարիքը՝ նշանակում է արնաքամ անել վերքն առանց վիրակապելու:

Սիրով ողջունում եմ ձեզ եւ շնորհակալություն հայտնում այստեղ գտնվելու համար:

Երախտագիտությամբ իր ներկայության համար՝ ողջունում եմ Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Սերժ Սարգսյանին: Իմ ջերմ ողջույններն եմ հղում նաեւ իմ եղբայր պատրիարքներին եւ եպիսկոպոսներին. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Նորին Սրբություն Արամ Ա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, Նորին Ամենափայլություն Ներսես Պետրոս XIX Տանն Կիլիկիո Կաթողիկե Հայոց Կաթողիկոս Պատրիարք, Հայ Առաքելական Եկեղեցու կաթողիկոսարաններ եւ Հայ Կաթոլիկ Եկեղեցու պատրիարքարան:

Ամենակուռ հաստատակամությամբ, որ չարը երբեք չի սերվում Աստծուց, ով անսահման բարին է, եւ կանգնած ամուր հավատքով՝ եկեք աղոթենք, քանի որ դաժանությունը երբեք չի կարող համարվել Աստծո գործը եւ ավելին՝ չի կարող երբեք Նրա Անունով գտնել որեւէ արդարացում: Եկեք շարունակենք այս պատարագը՝ մեր հայացքը հառելով Հիսուս Քրիստոսին, ով հարություն առավ մեռյալներից եւ հաղթանակեց մահվան եւ չարության նկատմամբ:

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

Սամվել Մելքոնյան

ՍԱՐՄԵՆ. ՀԱՆՈՒՆ ԵՎ Ի ՀԵՃՈՒԿՍ ԿՅԱՆՔԻ

Հայոց ցեղասպանության դարագլխին ենք: Տարին կարեւորվում է նրանով, որ ամեն հայ սկսում է նորից մտածել, վերարժեւորել անցած պատմության ընթացքը եւ խորապես հետամուտ լինել ազգային գաղափարախոսությանը: Քսաներորդ դարասկզբի ոճրագործությունն իր հետքը թողեց ամենուր՝ ցեղասպանվածների ժառանգների աչքերում, ազգակիցների հոգում եւ անգամ գրականության մեջ, ինչը բնական է: Սույնով ներկայացնում ենք հայ գրականության մի երախտավորի, որ տեսավ Ցեղասպանությունն ու ապրեց՝ ի հեճուկս եւ հանուն կյանքի. Սարմեն:

ԵՂԵՌՆԻՑ ՄԱԶԱՊՈՒՐԾ

Արմենակ Սարգսյանը ծնվել էր 1901 թվականին՝ Արեւմտյան Հայաստա-նի Ռշտունիք գավառի Պախվանց գյուղում: Մի զարմանալի օրինաչափություն կա մեր գրողների կյանքում. մեծ մասը ծնվել է հասարակ հողագործի ընտանիքում: Այդպիսին էր եւ Սարմենը: Հայրն անգամ տառերը չգիտեր, բայց շատ էր արժեւորում զավակների ուսման հարցը: Ապագա բանաստեղծի ձգտումն էլ մեծ էր: Նա 12 տարեկան էր, երբ հայրն ընտանիքին տեղափոխեց Հայոց ձոր գավառի Իշխանագոմ գյուղը, որ որդին ուսում առնի տեղի դպրոցում: Իսկ կիսալուսնի երկրից դեռ նոր էր լսվելու սարսռելի որոտը(«Մեր նոր օջախի ծուխը դեռ երկինք չէր հասել, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը»): Սարմենի հայրը, որ հայրենասեր ոգու տեր մարդ էր, մասնակցում է Վանի պաշտպանական մարտերին ու այնտեղ էլ զոհվում: Իսկ նրա թիկունքում որբ էին մնացել ապագա բանաստեղծը եւ մոտ 50-հոգանոց գերդաստանի մի տուն մանուկներ: Թուրքական յաթաղանն անգութ էր, Արմենակի ու քրոջ՝ Տիգրանուհու ճակատագրերը՝ մշուշված, այդ յաթաղանի առջեւ՝ անպաշտպան: Բայց նրանց պապերը սիրում էին ասել՝ որբի տերն Աստված է: Երեւի հենց Աստծո բարեգթությամբ էր, որ քույր ու եղբայր մի կերպ փրկվում են վերահաս մահից, միանում գաղթյալների խմբին, հասնում մինչեւ Իգդիր: Իսկ Արաքսի ափերին մոլեգնում էր տիֆը, որի հետքերը փաթաթվեցին նաեւ հազարավոր որբերի բանակում հանգրվանած Արմենակի

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

ԳՐԱԿԱՆ

Ինչքան ուզում եմ ընդմիշտ չհիշել,
Խորախոր թաղել անցյալս տխուր,
Նա հառնում է հար՝ որպես մութ գիշեր
Ե՛վ վհատելի, ե՛ւ վշտամրմուռ:

Բարեբախտություն պիտի համարել այն դիպվածը, որով նա քրոջ հետ տեղափոխվում է Գանձակ, ուր ստանում են մի բարեգութ ընտանիքի խնամակալությունը: Թուրքական յաթաղանից ու տիֆի համաճարակից մազապուրծ եղած Արմենակին ճակատագիրը հարված հասցրեց՝ նրանից խլելով հարազատներից շատերին: Քույրը՝ Տիգրանուհին, եղբոր հետ կարողացել էր ճեղքել մահվան մատույցները, ապա տեղափոխվել որբանոց: Արմենակի առջեւ էին կանգնել բախտախնդիր կյանքը, անորոշ ապագան ու կորսված հայրենիքը, որ հետո պիտի վարագուրվեին բանաստեղծական աշխարհով:

ՀԱՎԵՐԺԻ ՄԱՆՈՒԿԸ

Եվ ինչպիսի՞ն պիտի լիներ Եղեռնի թատերաբեմում մի ամբողջ ընտանիք՝ հայրական խորհուրդ, մայրական քնքշանք ու քրոջական սեր կորցրած մարդը: Եվ ինչպիսի՞ն պիտի լինեին մանկություն կորցրած հայի աչքերը՝ «սեւ ամպով ծածկված», «սեւ վշտից մաշված»: Սարմենը եղավ ավելի ուժեղ, քան կյանքն էր, որին հաղթեց իր հայի խնդուն աչքերով, բարի ժպիտով ու անկոտրում կենսասիրությամբ: Սարմենն ավարտել է Երեւանի պետական համալսարանը՝ աշակերտելով Հրաչյա Աճառյանին, Մանուկ Աբեղյանին, Գր. Ղափանցյանին եւ այլ նվիրյալների: Համալսարանական տարիների ամենամոտ ընկերներից մեկը՝ Թովիկը, նույնիսկ երանությամբ է հիշում միասին անցկացրած կիսասոված օրերը: Եվ ապշել կարելի

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

է, թե պոետն ինչպես էր կարողացել դիմադարձ կանգնել ճակատագրի հեգնանքին, արհամարհել ու նրանից վրեժ առնել ապրելով:

Հազար երանի իմ այն օրերին,
Երբ չէի տեսել ո՛չ Եղեռն, ո՛չ սով…

ՊՈԵՏԻ ԲԱԶՄԵՐԱՆԳ ՎՐԶԻՆԸ

Սարմենը ստեղծագործել է տարբեր թեմաներով, բայց միայն չափածո՝ իր ներդաշնակ ու նվագուն հանգերով.

Մա՛յր իմ, ինձ ինչու՞ պոետ ծնեցիր,
Որ ես տոչորվեմ աշխարհի վշտով:

Գեւորգ Աբաջյանը գրում է.«Նա երբեք գրիչը վայր չի դրել, մինչեւիսկ չի շեղել բանաստեղծի իր ճամփան»: Եթե ի մի բերենք նրա բոլոր ստեղծագործությունները, կունենանք մի խայտաբղետ շռայլություն, բազմազանության ծով: Ու զարմանալ կարելի է, թե ինչպես է Եղեռն տեսած պոետը կարողացել սրտի մտերմություն ունենալ դաշտի ծաղկի, զոհաբերվող գառնուկի, պատմություն կերտած պապերի ու թոթովախոս թոռնիկների, անգամ ծոռան հետ: Մի անտիպ քառյակ ունի, որ ներկայացնում է ալեզարդ պապիկի ուրախությունը ծոռ ունենալուց հետո.

Սի՛րտ իմ, օ՜, սիրտ իմ, դու սրտանց ցնծա.
Թոռներ ունեի, ծոռ էլ ունեցա:
Եղեռնից շանթված իմ տոհմածառը
Մի կանաչ ճյուղ էլ բերեց ինձ ընծա:

Այսպիսին էր ընտանեկան ջերմությամբ պարուրված պոետը: Նրա եղեռնատեսիլ աչքերը կարողացան վստահ նայել գալիքի արշալույսին, գրիչը երկնեց տողեր, որ պիտի դառնային մի ողջ ազգի պետական օրհներգը՝ մեծանուն Արամ Խաչատրյանի երաժշտությամբ: Իսկ ո՞վ փառք չի տվել «գինի պարգեւող հայոց խաղողին»՝ սկսած հենց Սարմենից, մինչեւ հետագա սերունդներն ու մենք:

Ցեղասպանվածների ժառանգ որդին, ի վերջո, հանդգնեց ասել.

Ուզում եմ քեզ հետ հաշիվս փակել,
Իմ ողբերգական վշտալի անցյալ:
Հերիք է, ինչքան ինձ հետ քայլեցիր,
Իմ մորմոքումից դու չձանձրացա՞ր:

Իր վշտալի ու արյունատեսիլ անցյալի հետ գրողը հաշիվը փակեց կյան-քի 83-րդ տարում, երբ դեռ շարունակում էր տենչալ հայրենի Պախվանցն ու Վանը: Չտեսավ, բայց նրա մահից տարիներ անց դուստրը այցելեց հայրական քաղաքը, Վանա լճից ջուր բերեց ու ցողեց հայրենաբաղձ պոետի շիրմին: Վանա ջուրը դարձավ Սարմենի բաղձանքի վերջակետը:

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

Մարիամ Սարգսյան

-ԴՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻՍ...

Նժդեհն ասում էր. «Թուրքը թրի հոգնակին է՝ մխրճված հայի սիրտը»: Ու այդ թրի թողած հետքերը հարյուր տարի է՝ չեն վերացել: Ու այդ սրտին մեր նոր սերունդը պետք է մատակարարի արյան անհրաժեշտ չափաբաժինը, որ սիրտը հավերժ զարկի, զարկի ու ապրի:

«Հայկական հարց». ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո կնքվեց Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը: Առաջին հայացքից հայերի համար ձեռնտու պայմանագիր, բայց արևմտաեվրոպական պետությունները, մտահոգված լինելով Ռուսաստանի հաջողություններով, հրավիրեցին Բեռլինյան բանակցությունները:

Բոլորս էլ գիտենք 16-րդ հոդվածի փոխարինումը 61-րդով և «թղթե շերեփ» արտահայտությունը:

Ամեն ինչ սկսվեց հենց այս պատմական կետից, երբ Հայաստանի բարեփոխումների ծրագիրը հանձնվեց բացառապես Թուրքիային: Գերտերությունների ազդեցությունը հարցում անհամեմատ մեծ էր: Մինչ 1915 թվականը սպանությունների,հարձակումների, կոտտանքների ալիքն արդեն բարձրացել էր Ադանայում:

Հայկական հարցը Թուրքիայի կոկորդին կանգնած մի մեծ ոսկոր էր, որ հարկավոր էր շուտ վերացնել:

Այս քաղաքականության իրագործողը դարձավ Աբդուլ Համիդ Երկրորդը: Անգամ վարչակարգի փոխվելուց հետո հայերի հանդեպ քաղաքականությունը մնաց նույնը:

-Թուրքիան թուրքերի համար է,- ասում էին նոր ձևավորված կառավարության անդամները՝ երիտթուրքերը՝ Էնվերը, Թալեաթը, Ջեմալը, Նազիմը՝ Մեծ Թուրան երազողները: Երազած երկիրը պետք է ձգվեր մինչև Կենտրոնական Ասիա, իսկ այդ ճանապարհի անմիջական խանգարողներ էին հայերը: Ճանապարհին արդեն պարզ էր՝ ոչնչացում:

Այն ժամանակ Վարուժանը բանտում Խալիլ Բեյին կհարցներ.

-Ինչի՞ համար է այս ամենը, բարեկամ: Ի՞նչ է արել հայը :

Իսկ նա կպատասխաներ.

-Հայն է Պոլսում բացել առաջին թատրոնը, հայի ձեռքում է հիմնական առևտուրը, թուրք ռամիկը հայի տանն է տանջվում, հայն ունի անդամ խորհրդարանում, ու հայն է Պոլսի մտավորական սերուցքը:

Այդ ժամանակ Վարուժանը գրում էր «Հացին երգը», Սիամանթոն ասպետի իր կեցվածքով կարմիր լուրեր էր ուղարկում բարեկամին: Ռուբեն Սևակն էլ հաշվում էր վերջին հայերին:

Զոհրապին տնից ձերբակալեցին յոթ հոգով՝ Քել Օսմանի գլխավորությամբ: Այդ ոստիկանին տեսնելիս Զոհրապը միշտ տասը ոսկեդրամ էր խոթում նրա գրպանը: Քանդեցին դարակներն ու հավաքեցին բոլոր թղթերը գրասեղանի վրայից, որովհետև ամենավտանգավորը մտքերն են, որ կարող են ի զեն գոչել:

Այդ օրերին Վարուժանը Կրմիտասին աղերսում էր.

-Պի՛նդ կաց, Վարդապե՛տ, չէ՞ որ մենք պիտի դադրենք ըլլալե, իսկ դուն, Փա՛ռք Աստծո, պիտի ապրիս: Դուն իրավունք չունիս, կլսե՞ս, իրավունք չունիս թուլանալու: Ամեն նահատակված հայի դիմաց՝ մեկ երգ: Դո՛ւն միայն կարող ես վըրեժ լուծել:

Բանտում Սևակն ու Վարուժանը ցնծալով էին լսում Կոմիտասի «Տեր, ողորմեա»-ն:

Բոլոր ձերբակալվածները սկսեցին երգել՝ մեկը մյուսից վարակված և ուժ առած: Դա Կոմիտասի վերջին երգչախումբն էր՝ ամենաանվարժը, բայց ամենահանճարեղը:

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

Աշնան սկիզբն էր.երկնքում արևն էր, օդում՝ հողի բույրը: Փոքր արշավախմբով էինք գնացել Արևմտյան Հայաստան՝ Անի: Առաջին անգամ էի Ախուրյան գետից այն կողմ անցել, ու ինձ թվում էր՝ ինչ-որ հատուկ զգացողություններ պետք է ունենամ՝ սիրտս պիտի արագ աշխատի, մարմինս՝ փշաքաղվի: Բայց ոչ մի նման բան. հանգիստ էի:

Անին կանաչ դաշտի մեջ է: Դարերն այստեղ կանգ են առել: Դիմացս Մայր տաճարն է: Ինձ ասացին, որ երեկ թուրքերն այստեղ՝ հայկական եկեղեցու մոտ, պատարագի փոխարեն նամազ են արել: Տարօրինակ է. մի պահ հեռանում եմ Անիի Մայր Տաճարից, տեղափոխվում մանկություն: Հիշում եմ, մի հարևան ունեինք՝ Մարիամ տատը: Բոլորս նրան ուղղակի տատ էինք ասում: Նա բոլորի՛ս տատն էր՝ աշնան տերևի պես դեղնած, կնճռոտված դեմքով, ձյունե մազերով ու անսահման բարի աչքերով, որոնք ավելի

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

էին բարիանում,երբ ժպտում էր: Նա նման չէր մյուս տատերին. նրա գոգնոցի գրպանները լիքն էին ոչ թե կոնֆետով, այլ պատմություններով, որոնք մեկիկ-մեկիկ հանում էր տատը, պատմում: Մեծ ու փոքր հավաքվում էինք նրա շուրջ, բերաններս բաց լսում, տխրում կամ ուրախանում: Պատմելիս նայում էր հեռու ինչ-որ կետի, ու թվում էր՝ մեզ չի տեսնում: Հատկապես մի պատմություն է մեխվել հիշողությանս մեջ:

Աշունը նոր էր իջել Անիի վրա: Երիտասարդ էր Մարիամ տատը. այն ժամանակ նա ուղղակի Մարիամ էր՝ տասնյոթ տարեկան աղջիկ: Անիի Մայր տաճարի բակում էին ինքն ու մի երիտասարդ զինվորական, որի հետ այնքան էլ լավ ծանոթ չէր: Պատարագն ավարտվել էր, և տաճարի մոտ ոչ ոք չկար: Մեղմ քամին խաղում էր աղջկա մազերի ու չթե զգեստի փեշերի հետ: Տղան կռացավ, սկսեց հատ առ հատ քաղել վանքի տարածքում բուսած դաշտային ծաղիկները՝ կարմիր,հազիվ երևացող փոքրիկ գլխիկներով: Մի փունջ սարքեց ու նվիրեց Մարիամին: Չինչած խոսքերի փունջն էր այդ, որ գուցե պիտի ասեր երիտասարդը, բայց չասաց: Ինչո՞ւ չասաց. չհասցրեց... Դրանք առաջին չասված խոսքերն էին աղջկա կյանքում, որ պիտի լսեր սրտի թրթիռով, պիտի վարդագուներ գեղեցիկ դեմքը՝ նմանվելով դաշտային ծաղկի:

Հնչեցին վանքի զանգերը, չարագուշակ զանգերը, աղմուկ բարձրացավ: Գույժ հասավ. թշնամին է: Երիտասարդը վազեց քաղաքի կողմը, Մարիամը՝ հետևից: Ծաղիկները ձեռքից ընկան... Ուզեց հետ դառնալ ու վերցնել, բայց շտապել էր պետք: Թուրքական զորաջոկատը մտել էր Անի…

Քաղաքաբնակների մի մասը մնաց՝ կռվելու հարազատ քաղաքում: Մյուս մասը, նրանց մեջ և Մարիամը, բռնեց գաղթի ճամփան: Աղջիկը բազմության մեջ երկար փնտրեց երիտասարդին, որոնեց արևից խանձված դեմքերի մեջ, իրար հետևից հազիվ քայլող մարդկանց հոգնատանջ հայացքներում, քաղցից հյուծված մանուկների մարող աչքերում... Չգտավ: Իսկ բազմությունը քայլում էր... Օրեր հետո անեցիներն անցան Ախուրյան գետը՝ հեռվում թողնելով հայրենիքը, հայրական տունը: Շատերի նման Մարիամն էլ կանգ առավ, վերջին անգամ հայացք գցեց ծանոթ վայրերին: Նա հիշեց Անին, տաճարի բակը, երիտասարդ զինվորականին, կարմիր ծաղիկները, որ հետո, շատ տարիներ հետո դեռ պիտի հիշեր ու կարոտով մրմընջար. «Ծաղիկներս մնացին գետից այն կողմ»: Բայց մինչ այդ նա պիտի քայլեր, մաքառեր ու հասներ Երևան, մինչև իմ մանկություն:

Եվ հիմա ես այստեղ եմ, Մարիա՛մ տատ: Շուրջս կանաչ դաշտն է՝ տեղ-տեղ բուսած կարմիր ծաղիկներով:Ես կռանում եմ, ընկսում դանդաղ, մեկ առ մեկ քաղել դրանք՝ խնամքով ընտրելով ամենագեղեցիկները: Մի փունջ եմ հավաքում և ինձ հետ բերում Երևան՝ տատի շիրմին: Հիշողությանս մեջ դեռ մնացել է քո դողացող, կերկերուն ձայնը:Մարիա՛մ տատ, դու միշտ կրկնում էիր. «Ծաղիկներս մնացին գետից այն կողմ»: Այժմ դրանք գետի այս կողմում են: Ես վերադարձնում եմ քեզ քո ծաղիկները: Մի օր էլ այս ծաղիկների նման վերադարձնելու ենք քո Անին...Մե՛ր Անին…Մեր պատմական Հայաստանը...

Լառա Հակոբյան

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

Շուշանիկ Ասատրյան

Մենք հանդիպել էինք իմ երազում՝ ես և Նա:

Նա ուներ փայլուն աչքեր, խորամանկ ժպիտ: Ինձ նրա մեջ գրավել էր ձայնը՝ շողոքորթող, բայց միևնույն ժամանակ հաճելի խոսքերը... Երբ դիպչում էր մատներիս, ներսս տակնուվրա էր լինում: Սիրում էր վարսերիս հետ խաղալ: Քամու պես նուրբ էր: Ժպիտը հմայող էր ու արևի պես ջերմ, բայց բընավորությունը եղանակի պես փոփոխական էր: Մի օր վիճեցինք, ու գնաց երազից. մենակ էի մնացել, գնացել էր, բայց խոսքի վերջին հնչյունը դեռ չէր մարել օդում: Քամի էր սկսվել, ու հասկացել էի, որ նրա մատները քամուց էլ նուրբ էին: Գնալուց հետո մաշկս դեռ պահպանում էր մեր հպման ջերմությունը:Մոլորված առասպել էր մեր սերը, հուշերս դարձել էին խաշված անցյալ, կրքերս՝ մաշված հնոտի: Արթնանալուց առաջ որոշեցի նամակ գրել. գուցե վերադառնար:

«Սիրելի Նա, շնորհակալ եմ քեզնից ամեն պահի համար: Դու սևակյան բանաստեղծության պես գրավել էիր ինձ, դարձել կյանքիս երաժիշտը, որի բոլոր ստեղծագործություններն սկսվում էին նախատակտով և ավարտվում անսպասելի»: Արթնացա քնից. այգաբաց էր: Սկզբում չէի գիտակցում իրականությունը. իրական էր թվում երազս: Մեկ բաժակ ջուրն օգնեց գիտակցությանս: Որոշեցի մի կտավ նկարել. խորհրդավոր էր երազս: Նկարեցի արև՝ դեմքին ժպիտդ, ծաղիկներ՝ մաշկիդ բույրով, ուռենի՝ վարսերիս պես երկար ճյուղերով: Փորձել էի քամին մատների պես նուրբ նկարել, բայց դա Նա-ի բացառիկ արվեստն էր, որը դժվար էր ներկայացնել: Նկարել էի նստարան՝ մեր սիրո ականատեսին: Նամակը նստարանին էր դրված. չգիտեի՝ եկել ես, թե... ՆԱ-ն սովորեցրել էր նայել արևին երկնքի պես հարազատորեն, լուսնին՝ աստղերի պես բարեկամաբար, բայց ա՛յ, հուշերիս սովորեցրեց նայել ջարդված ապակու փշուրների պես, որոնք փայլում էին ու ծիածանվում արևին տեսնելիս: Ապրել երազներով, իհարկե, հաճելի է, քանի որ իրականում անկեղծ ոչինչ չկա՝ անկեղծ մարդու սուտը վկա...

Created using easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՃԱՆԱՉԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ



Created using
easyPDF Printer
Click here to purchase a license to remove this image